ՀԱՅՈՒՆՅԱՑ ԽԱՉ
(ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԶՐՈՒՅՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ)

ՆԱԻԲԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Հայ հին և միջնադարյան արձակը հարուստ է և բազմաժանր: Նրա որոշ ժանրերի և ենթաժանրերի ուսումնասիրությամբ զբաղվել են մեծանուն հայագետներ Ն. Մառը, Ի. Օրբելին, Մ.Աբեղյանը և ուրիշներ:Սակայն միջնադարյան արձակի, հատկապես գեղարվեստական արձակի նկատմամբ նրանց մոտեցման մեջ մնացել են բացեր: Բազմիցս հրատարակվել ու վերահրատարակվել են մեր պատմագրության հուշարձանները, կրոնավարքաբանական աշխատությունները: Մեծ ուշադրություն են նվիրել անցյալի մեր հարուստ գրական ժառանգության կարևոր մասերից մեկին՝ միջնադարյան քնարերգությանը:

Միջնադարյան գեղարվեստական արձակի ժանրերից խոր և համակողմանի ուսումնասիրվել են առակները: Բանահյուսության ժանրերից կարելի է նշել զրույցը, որը որոշ ժամանակ չի արժանացել գրականագիտության ուշադրությանը: Պատճառն այն էր, որ միջնադարում դրանք զուգակցվում էին առակին, հեքիաթին, այսինքն՝ հստակ սահմանազատում չկար, որովհետև Հայ միջնադարի զրույցների հատուկ ժողովածուներ կամ հեռազոտություններ չկան: Դրա պատճառը թերևս մանրապատում զանազան ստեղծագործությունների մեջ գոյություն ունեցող ժանրային ընդհանրություններն են և հստակ ու որոշակիորեն չսահմանազատված առանձնահատկությունները[1]'': Միջնադարյան զրույցներին նվիրված կարևոր ու շնորհակալ գործ է կատարել Ա.Սրապյանը:

Զրույցը միջնադարյան գեղարվեստական արձակի կարևոր ու մատչելի տեսակներից է, այն համընդհանուր տարածում է գտել և՛ բանավոր, և՛ գրավոր: Զրույցն օգտագործում էին ճառեր կարդալիս, քարոզելիս, երբ հարկավոր էր լինում դրանք ամրագրել կյանքից քաղված մանրապատումով: Իր զարգացման ընթացքի մեջ զրույցը անցել է պատմական երկարատև ուղի և դարձել բազմազան՝ ինչպես թեմաների, այնպես էլ գաղափարների և այլ առանձնահատկությունների մեջ:

Պահպանելով հին սյուժեները՝ զրույցը ժամանակի ընթացքում ձևավորվում և ձեռք է բերում նորերը: Այդ մասին Ա. Սրապյանը արել է արժեքավոր եզրակացություն՝ նշել. „Թերևս սրանով էլ պետք է բացատրել եվրոպացի և ռուս գիտնականների այն տարակարծությունները, որ գոյություն են ունեցել զրույցի բնորոշման մեջ առհասարակ՝ որպես գրական տեսակ (ժանր) '': Նա նշում է նաև, որ զրույցները միատարր չեն եւ ունեն հիմնականում երկու ակունք, ***տեղային հայկական*** և ***փոխադրական թարգմանական***՝ „Ըստ այդ ակունքների մեր զրույցները կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Տեղական կամ բուն հայկական.

բ) Տեղական կամ ազգայնացված.

գ) Թարգմանական կամ փոխադրական:

Անշուշտ այսպիսի սահմանազատում դժվար է կատարել բացարձակ ճշտությամբ. մի բան, որ գուցե և առհասարակ անհնար է իրագործել''[2]:

Իրենց բովանդակությամբ և շոշափած հարցերով և՛հոգևոր, և՛ աշխարհիկ զրույցներն ունեցել են բազմապիսի խորհուրդներ և նպատակներ:Մինչև 12-13-րդ դարերը ստեղծված զրույցներում գերիշխում է պատմական ատաղձը: Դրանք հարուստ են դեպքերով, դեմքերով և ուղղված են որևէ կոնկրետ պատմական իրադարձության լուսաբանմանը: Այս ժամանակաշրջանում ստեղծված զրույցներին հատկանշական էր հայրենասիրությունը, որը խարսխվում էր քրիստոնեական դավանանքի վրա:

Զրույցի նյութը անմիջական է, քարոզվող գաղափարը՝ հայրենասիրական, աստվածապաշտական, մարդկային բուրբությունները ծաղրող: Այն աստիճանաբար ընդլայնել է իր սահմանները և ձեռք բերել լայն իմաստ մերձենալով ավանդապատումին եւ վեպին: „Այս դեպքում ***զրույց*** բառը հանդես է գալիս որպես ընդհանուր որոշիչ՝ առհասարակ արձակ գրված զանազան ոչ ծավալուն ստեղծագործությունների[3]'':

Զրույցների մի մասը թարգմանական է, սակայն դա չի նսեմացնում նրա արժեքը , քանի որ այդ թարգմանությունները կատարվում էին բավական ազատ՝ „Ոչ կրոնական, աշխարհիկ նյութերը, էլ չեմ ասում մանրապատումները, առակները և այլն, թարգմանվում էին շատ ազատ: Դրանք ավելի շուտ վերապատումներ կամ փոխադրություններ են, քան թարգմանություններ: Շատ հաճախ օտար նյութը հայ „թարգմանչի'' գրչի տակ ազգայնանում էր, երբեմն նոր միջադեպեր ներմուծվում, երբեմն էլ գործողության վայրը Հայաստան փոխադրվում[4]'', նշում է Մելիք-Օհանջյանը:

---

1 *Սրապյան Ա., Հայ միջնադարյան զրույցներ, Ե., 1969, էջ 12:*

2 *Նույն տեղում, էջ 41:*

3 *Նույն տեղում, էջ 39:*

4 *Կ. Մելիք-Օհանյան, Էջեր Միջնադարյան գեղ. արձակից, Ե., 1957, էջ XVII:*

Դավանաբանական բնույթ ունեցող զրույցները, առաջին հայացքից, լոկ կրոնական ստեղծագործություններ են և գրված են երկյուղածություն ու հավատ ներշնչելու նպատակով, սակայն նրանցում առկա է, նաև հայրենասիրությամբ շնչող խրատը:

Ուշագրավ են նաեւ առանձին եկեղեցիների, սրբավայրերի, խաչերի շուրջը հորինված հրաշապատում զրույցները, ինչպես, օրինակ, Վարագա վանքից զանձերի ու խաչի առնանվման, Հացունյաց խաչի, „ծիծառնիկ, ճոնեաց և իշխանաց խաչի'' մասին զրույցները[1], հրաշապատումների՝ բանահյուսության մեջ անցնելու հետևանքով առաջացած „Կարոս խաչ'' վիպերգը և այլն:

Հայ ժողովուրդը երբեք անտարբեր չի մնացել իր կյանքի պատմական իրադարձությունների նկատմամբ և իր վերաբերմունքն արտացոլել է բանահյուսության մեջ: Երբեմն զրույցները գրի առնելու ժամանակը տարբերվում է բուն նյութի ժամանակից: Հնարավոր է այնպիսի տարբերակ, երբ զրույցի նյութը վերաբերում է պատմական մի ժամանակաշրջանի, իսկ գրությունը՝ ավելի ուշ շրջանի: Զրույցը, որը ներկայացնում ենք, նկարագրում է պատմական իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել 7-րդ դարում: Այդպես է վկայում նաև Մ.Օրիամանյանը. „Յիշատակարանը կը յիշե կը-613 թուականը, որը Պարսից արշավանքին տարին է, ապա թե ոչ Երուսաղեմ առնուեցաւ 614-ին, Հերակլը պատերազմի ելավ 622-ին և Խաչին վերադարձը տեղի ունեցավ 631-ին: Իսկ Ս.Խաչին գտնվելու վայրի վերաբերյալ ահա թե ինչ է գրում Ղ.Ալիշանը..„Այժմ կոչի սա Արգեադու Ս.Խաչ, Ս. Խաչի գտնվելու վայրի վերաբերյալ ահա թե ինչ է գրում Ղ.Ալիշանը..„Այժմ կոչի սա Արգեադու Ս.Խաչ, չի մասը կը կարծուի Արկադանի կամ Արգեադու Ս.Խաչ դրուած եւ այժմ եկեղեցւոյ հիմին մէջ քաղուած''[2]:

Ս. Խաչի գտնվելու վայրի վերաբերյալ ահա թե ինչ է գրում Ղ.Ալիշանը..„Այժմ կոչի սա Արգեադու Ս.Խաչ, վասն մասին միոյ կենաց փայտին, զոր ասեն զՀացինունացն գոլ, այսինքն զուտեալն ի Հերակլեայ կայսերէ առ Բիւրեղ տիկին Սիւնեաց, և աւանդութեամբ համարին այժմ ծածկեալ զայն ի հիման եկեղեցւոյն, և զան յուխտ նմին մահմետականք անգամ[3]'':

Բազմաթիվ զրույցներ երբեմն հին և միջնադարյան ձեռագրերում տեղ չէին գտնում, նրանք զոյատևում էին շնորհիվ այն բանի, որ պահպանվում էին պատմագրական ու ժամանակագրական երկերում՝ իրադարձությունների անանջատելի օղակ դարձած:

Հացունյաց խաչի մասին պատմող զրույցը կարելի է սրանց թվին դասել: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակները ուսումնասիրելիս՝ այս զրույցին հանդիպեցինք 3 ձեռագրերում՝ թիվ 1775, 3461, 3519: Մինչդեռ պատմագրական երկերում այն նույնպես առկա է, համեմատաբար ամբողջությամբ ներկայացված է Շապուհ Բագրատունու „ Պատմության'' մեջ[4]: Մ.Աբեղյանը նշում է, որ այս „Պատմությունը" մի զրույցարան է, որտեղ զրույցները սկսվում են Մահմեդով,որ շինում է Պաղտադ քաղաքը: Ապա պատմվում է Սորիկ կայսրի, Հացունյաց խաչի, Սահակ կաթողիկոսի մասին ծանոթ զրույցները և մի երկու ուրիշները[5]'': Այս պատմագրական երկրի մեջ զրույցը միաձուլվել է պատմական հենքին և շաղկապվել պատմության համակարգին: Հացունյաց խաչի մասին պատմող զրույցի մասին վկայում է նաև Մ.Չամչյանը „Հայոց պատմություն'' աշխատության մեջ, այստեղ զրույցը համադրվել է համանման այլ զրույցների կողքին: Նման պատմություններ են ասվանդում Ղ. Ալիշանը[6], Մ. Օրմանյանը[7], Խ. Դաղյանը[8]:

Հունաց Հերակլ արքան արշավանքի ժամանակ գտնում է Երուսաղեմից առևանգված Սբ. Խաչը: Նրան մեծ օգնություն է ցույց տալիս Սյունյաց Բյուրեղ տիկինը, որի մասին Ղ. Ալիշանը գրում է „ Մի ի սոցանէ (երիցագոյն, ի մայրպպանաց և պատրկաց ժամանակս), Բիւրեղ տիկին Սիւնեաց յառաջին կէս է՝ դարու, արդարն տիկնաբար և արքայաբար հիւրընկալեալ զՀերակլ կայսր՝ ոսկէպատ կառօք, ընծայէր նմա 1000 զրահս, 1000 սաղաւարտս, զէնս ոսկէկուռս. 400 և ձիս և ջորիս, և ասս մարտիկս 3000... Եւ էր տիկինն զեղեցիկ և իմաստուն յոյժ''[9]:

Այս տիկնոջը, ցուցաբերած բարեսրտության և օգնության համար, Հերակլ արքան ցանկանում է պարգևատրել և առաջարկում է.„ Եւ արդ խնդրեա յինէն և արարից քեզ վասնսրէն[10]'': Տիկնոջ խնդրանքով նա խաչափայտից մի մասունք է տալիս, ապա այդ մասունքը „ հացիսն դաշտի միջոց անցնելիս տանող ջորին կանգնում է և տիկինը հենց այնտեղ շինում է վանք և ինքը գնում է իր ամրոցը[11]'':

Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրացուցակում այս զրույցը մեզ հանդիպեց երեք օրինակով: Ամենահին զրությունը 1647թ. (ձեռ. 3519), Վաշարեկ, Հանգարիա, գրիչ Խաչիկ Կաֆայեցի: Երկրորդ 1662թ.(ձեռ. 3461), Թոխատ, գրիչն է Յովհաննես Բաբերդցին: Երրորդ բնագիրը գրի է առնվել1671-ից առաջ, գրիչներն են Յովհաննես Ամասիացին, անանուն:

Ստորև կցում ենք զրույցի բնագիրը:

---

1 *Չամչյան Մ., Հայոց պատմութիւն, Ե, 1984, Բ.հ., էջ 532:*

2 *Օրմանյան Մ., Ազգապատում, Բեյրութ, 1961,գ.հ.,գ.գիրք,էջ 5526:*

3 *Ալիշան Ղ., Միասկան: Տեղեկագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 118:*

4 *Շապուհ Բագրատունի, „ Պատմութիւն Շապհոյ Բագրատունեաց, Էջմիածին տպարան, 1921, էջ 11-14:*

5 *Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն-, Ե., 1944, հ. Ա., էջ 464*

6 *Ալիշան Ղ., նույն տեղում, էջեր 7,14,118:*

7 *Օրմանյան Մ., նույն տեղում, էջ 5526*

8 *Դաղյան Խ., ցուցակ ձեռագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 102:*

9 *Ալիշան Ղ., նույն տեղում,էջ 118*

10 *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 1775:*

11 *Դաղյան Խ., Ցուցակ ձեռագրաց, էջ 102:*

Պատմութիւն յաղագս Սրբոյ խաչին, որ Հացունեաց կոչուի: Եւ թէ որպէս դարձաւ ի պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ: Եւ յայնժամ մասն ընկալեալ տիկնոջն Սիւնեաց[1]:

Եղև յետ թագավորելոյն Մաւրկայ[2] արքային հոռոմոց, քանզի առեալ էր նորա կին զՁաւիրան՝ քոյր Խոսրովուճ՝ արքային պարսից, որդւոյ Ձաբասայ: Զի յորժամ թագավորեց Մաւրիկ ի Կոստանդինուպօլիս, հաստատեցաւ թագաւորութիւն նորա յոյժ յոյժ: Քանզի եկեալ զամենայն աշխարհն հոռոմաեցւոց և դարձեալ ի կողմանս հարաւու և բռնաբար եկալ զԵգիպտոս: Եվ եկն յԵրուսաղէմ և ածեալ պարիսպ, շուրջանակի պատեաց զնա: Եւ շինեաց զեկեղեցիսն, զոր աւերեալ էր ապօրէն Վաղէս կայսր հոռոմոց: Եւ էկալ զթագաւորութիւնս Յունաց ամս քսան և վեց: Եւ առեալ զքոյր Խոսրովու[3] ի կնութեան, քանզի ի հարկի կացոյց զնա: Եւ տիրեաց նա առհասարակ և ձգեաց զոտն իւր յարևելս: Եւ առձեռնեց զաշխարհն Հայոց և զԱղուանս և զաշխարհն Լիկիզացւոց, որ են արխազք: Եւ այնպէս բռնացաւ ի վրա արևելից և արևմտից և հարաւու: Եւ զմախազ ոմն յաշխարհէն Համենեայց, զոր ոմանք յառակս արկեալ ասեն, թէ իբրև ի ժամանակս Մաւրկայ նստեալ ես յանհօգս: Եւ յետ այսորիկ, էր այր մի անուն Հերակլ[4], զոր ընկնեալ էր յաքսորս Մաւրիկ : Եւ էր ի կղզւոջն, որ հանդէպ կա Մառաէ: Նա առաքեաց զաղտագողի ի Կոստանդինուպօլիս և միաբանեաց զոմանս ի դրանէ արքունի: Եւ առեալ սպանի արքայն, յորժամ նստեր ի տեղան, ի ժամ ճաշուն: Եւ առաքեցին հանին զՀերակլ և թագաւորեցուցին զնա: Եւ առեալ զորդիս Մաւրկի նորա սպանանէր Հերակլ: Եւ կինն Մաւրկայ ելեալ զնաց յաշխարհն Պարսից, առ Խոսրով եղբայրն իւր և պատմեաց նմա զանց աղետից, զոր արարին տունն Յունաց:

Յայնժամ Խոսրով արքայ առաքեաց զՀոռոմիան զօրավարն իւր և զումարեաց զկնի նորա զօրս անթիւ բազմութեամբ, հանդերձ փղօք և եկեալ յաշխարհն Յունաց և բազում նեղութիւն հասոյց և աւերեալ զամենեան աշխարհն: Եւ զբազում քաղաքս պարսպատոս տապալեաց ի հիմանց և եհաս առն զերապանծ քաղաքի ԿՊ.: Կամէր ճանապարհ առնել ընդ ծովն և ոչ կարաց: Եւ դարձաւ անդրէն յաշխարհն պաղեստինացւոց և աւերեաց զԵրուսաղէմ ի հիմանց: Եւ առեալ զնշան խաչին Քրիստոսի և զամենայն սրբութիւնս զեկեղեցոյն: Նաև զսպիսկոպոսունք և զքահանայք սրախողխող արարեալ և զմնացեալն զերի վարեալ տարեալ յաշխարհն Պարսից:

Եւ դարձեալ ի միուսում ամի, զնոյն առնէր: Եւ երրորդ անգամ դիմեալ՝ անապատ արար զաշխարհն Հոռոմոց: Եւ զքաղաքս մեծամեծս զամենայն ըմբռնեաց: Յայնժամ ապա և արքայ Հերակլ ժողով արարեալ՝ միաբանեաց զզօրս աշխարհին Յունաց, Հայոց և զԱփխազաց: Եւ դիմեալ յհարևելս և հասավ մինչև ի Կարնոյ քաղաք: Եւ տեսեալ զնա աւերեալ, կամէր դարձեալ շինել զնա: Եւ խնդրէր վասն փրկական խաչի Քրիստոսի և ի տարաբաղձանէր, զի ոչ գիտէր, թէ որպէս գտցէ: Եւ էր առաջի արքայի այր ոմն, նախարար ի դրանէ նորա, որում անուն էր Կոստանդին և ասէ զարքայ.

--Եթէ հրամայեք ծառային քում զխնդրելիդ զայդ, ծառայ քո երթալ տեղեկացայց ուրիցէ խաչն Քրիստոսի:

Եւ ասէ արքայ.

--Զանա, եթէ հնար է , զոր ասեսդ:

Եւ նորա առեալ հրաման, կազմեաց ջորիս և առ զանձս բազումս և հանդերձս պայծառս և ականս պատուական: Եւ չու արարեալ եկն զերկիրն Պարսից, ի քաղաքն Գանձակ, շահաստան, ուր ոսկի քարն գործի, որ է Թաւրէժ: Եւ լսեալ արք քաղաքին և ասէն բան մարգարեութեն.

„Ցանկալի է մեզ յայսմ աւուր, զի յորում աւուր ձեզ հնար է տացուք: Եւ զինչ ցանկալի է սրտի և աչաց մերոց, զիւտ է առ առնս հռոմայեցի'':

Լուաւ և արքայ ԽոսրովՀ,՝կոչեաց զայրն, որ վաճառական էր և ասէ.

--Յո՞րմէ աշխարհէ ես:

Եւ ասէ այրն.

--Յաշխարհէն Յունաց:

Արքան ասէ

Ունի՞ս վաճառ պիտանի:

Ասէ այրն.

--Այո, արքա և յոյժ պիտանի, ունիմ զանձս ոսկոյ և հանդերձս պայծառս և անօթս ընտիրս:

Եւ բերեալ առաջի, հաճոյ թուեցաւ արքային: Եւ յամեն առեալ ետ զգինսն և որ չափ տայր, այն չափ առնոյր և ոչ յաւելոյր վաճառականն: Եւ ել համբաւն նորա ի քաղաքն և ամենեքեան զային առ նա: Եւ նա միայն կայր և հնարեր գտանել զտեղի յարկի, ուր կայր Խաչն Քրիստոսի, վասն որոյ և եկեալ էր : Հսկեր, զի ստուգեսցի զտեղն զայն: Եւ էր այր մի դրան արքային և յոյժ բարեկամ արքային:

Նա եկեալ առ այրն հռոմայեցի, զնեաց հանդերձս պայծառս և անօթս ոսկեղենս: Եւ հարցեալ և գիտացեալ զառն բարեմտութիւն՝ եղև բարեկամ նորա վաճառականն: Եւ յաւուր միում ասէ ցնա.

--Ես ահաւասիկ բազում աւուրք են, զի գամ առ քեզ: Եւ պարտիս դու ևս գալ ի տուն իմ և հատուցից փոխարէն բազում ծախսոց քոց:

Եւ նա ասէ.

--Գամ ի տէր կամօք:

Եւ եղև յաւուր միում կոչեաց զնա ի տուն իւր և կազմեաց նմա պայծառ բազմականս և ճաշս զանազանս խորտիկաց: Եւ իբրև բազմեցաւ, առեալ վիսցն միայն ճաշակէր: Եւ եհարց ցնա այրն պարսիկ.

--Զի՞ ոչ ճաշակես:

Նա պատասխանեալ ցնա.

--Այս երեք ամք են, զի ոչ եմուտ ի բերան իմ միս կամ այլ վայվուկ կերակուր:

Ասէ ցնա.

--Ընդեր՞:

Ասէ ցնա.

--Քանզի ուխտ կալել եմ, մինչև երկիր պագանեմ վայրին սրբոյ, զոր գերեաց Խոռիան զորաւարն ի քաղաքէն, յԵրուսաղէմ: Եւ այսպա ճաշակեմ միս կամ այլ կերակուր:

Ասէ ցնա.

--Լուր, զոր ասեմ քեզ: Եթէ հնարէր, բերեի առ քեզ վայրն սուրբ, բայց չէ հնար ձեռն հասումեք լինել: Զի տեղոջ, յորում կայ վայրն ձեր, սենեակ է Խոսրովայ արքային մերոյ: Այլ եթէ կամիս, սարայց զքեզ հուպ առ սունն, յորում կա նա:

Իսկ նա իբրև լուաւ, երկիր էպագ առն: Եւ իսկայն յարուցեալ զնացին յայպարանս թագաւորին և ցուցեալ զտունն, ասի:

--Ասա անօր կայ վայրն խաչին ձերոյ:

Եւ նա անկեալ, երկիր պագանէր առաջին սանն: Եւ զնաց ուրախութեամբ ի տուն իւր և նոյն ժամայն վտիթաց և այլ հղեաց հրովարտակ առ Հերակլ արքայ՝ փութալով հասանել: Եւ նա էր ի՝քաղաքն Կարնոյ: Եւ սկիզբն ալարեալ էր շինել զպարիսպն, զոր քակեաց Խոռիան: Իսկ իբրև եհաս նամակն առ կայսր, ուրախ եղև յոյժ: Եւ միաբանեալ զումարեաց զամենայն զօրս իւր՝ զհայոց, զավխազաց և զաղուանից, և զմիջագետաց զօրս խառնեաց ի զօրս յունաց: Եւ չու արարեալ եհաս յաշխարհն Վասպուրական: Եւ իբրև լուաւ Բիւրեղ սիկին Սիւնեաց և եկն ընդ առաջ նորա՝:Եւ բերեալ զգանձս բազում և հանդերձս, ձիս և ջորիս և սպառազենս՝ զրահս հազարս և զվնս ոսկէկոսս չորեք հարիւր, և սաղավարտս հազարս և արք պատերազմի երեք հազարս զկնի նորա: Եւ էր նա կին զեղեցիկ և իմաստուն յոյժ: Եւ հաճոյ թուեցաւ յաչս արքային: Յայնժամ զնաց արքա Հերակլ և խաղացեալ եկն յաշխարհն Պարսից: Եւ էին ընդ նմա բիւրք տասն արանց պատերազմողաց, հեծելազորաց:

Իբրև լուաւ արքա Խոսրով, կազմեաց և նա զզօրս իւր և ել ընդ յառաջ նորա՝ ի զորձ պատերազմի: Եւ եղեալ ճակատ առ ճակատ ի դաշտին Թաւրեժա: Եւ պարանոցին զնա զօրքն հռոմոց և հալածեցին զնոսա : Եւ եղին հատուածք մեծամեծք ի նոսա: Եւ կալեալ Խոսրով արքայ, կապեաց երկաթի կապանօք և զնացեալ ի բանդաք պաշարեց և յաւուրս երիս առ զնա: Եւ քանդեաց զամուրս նորա և բացեալ զտուն զանձաց թագաւորին և գտեալ ի նոցա զվիրական խաչն Քրիստոսի: Եւ ժողովեալ ամենայն զօրացն, երկիր պագեցին առաջի նորա: Իսկ թագաւորն ինքնին մատուցանէր զվսունկն և օրհնէր զԱստուած, և երկրպագէր սրբոյն խաչին: Եւ ուրախութեամբ ուրախ եղեն՝ աւօն մեծ կատարելով: Եւ ապա յաւարոճ առեալ եհար զամ աշխարհն Պարսից, և անապատ արար զնա և զբնակն խաղացոյց ի գերութիւն: Եւ եկեալ բնակեցավ ի դաշտին Զարևանդ գաւառին: Իսկ ապա յաղաչանս անկեալ Խոսրով առ կայսրն: Եւ լուաւ աղաչանս նորա և արձակեաց զնա ի շղթայից անտի: Եւ դադարեաց ի տեղւոն յայնմիկ աւուրս երեսուն: Եւ շինեաց անդ եկեղեցի և կանգնեաց անդ նշան խաչի: Եւ գրեաց ի յարձանի զամենայն իւր պատերազմին և ժամանակ թուականին հայոց կը.՝: Եւ անդ բան առեալ միմեանց արքա Խոսրով և Հերակլ կայսր և եղին սահման զտեղին զայն և կոչեցին զնա Հրանսարակ: Եւ հրաման ետ արքայ Հերակլ զօրաց իւրոց՝ և կուտեցին հող բերեալ և արարին բլուր բարձր ի վերա նորա: Եւ արձակեց զարքայն Պարսից, այլ նա ոչ կացեալ ի բանի նորա, զոր և սպանեալ Հերակլի՝ բառնայ զթագաւորութիւն պարսից: Եւ ինքն դարձաւ ի Հայս՝ ունելով զսուրբ խաչն առաջի իւր: Եւ եկեալ բանակեցաւ ի դաշտին Գնրատայ, մերձ ի քաղաքն Սանասարուկ Շաւարշոյ: Եւ նկն դարձեալ սիկինն Սիւնեաց ընդ առաջ արքային և խնդութեամբ երկիր էպագ սրբոյ խաչին: Եւ ընթեալ՝պատարագս բազումս առաջ քան զառաջինն: Եւ ասէ զնա արքայ.

-Ով՞ տիկին, դու բազում ծախիք աշխատ եղեր: Եւ արդ խնդրեա յինէն և արարից քեզ փոխութիւն:

Իսկ նա ասէ զնա.

- Ով արքա, ոչ ինչ պիտոյ է ինձ ի քէնէ:

Եւ ասէ արքայ.

-Որ չափ մեծիցես դու քան զիս, որ զաշխատութիւն քո տարայց զանձամբ իմով: Խնդիրեայ յինեն, աշխարհին ինչ կամենաս՝ զանձս ոսկոյ և արծաթոյ, ձիս և ջորիս:

Եւ ասէ սիկինն.

-Ոչ ինչ առնում ի ձեռաց քոց: Այլ եթէ զտի շնորհս առաջի քո, ասացցես, թէ ում նման ես դու, կամ ես:

Ասէ արքա՝ ասա:

Ասէ սիկինն.

--Նման ես դու առն ճանապարհորդի և ես նման եմ օթևանաւոր ասպնջականի, որ առեալ ընդունեցի և-կեալն յուսոյ: Եւ զինչ և լինիցի, պատրաստեսցէ առաջի նորա և յամենայն զօրութիւն իւրմէ, կերակրեսցի զայն ուղտդ: Իսկ նա հանեալ ի մթերից իւրոց՝ տացէ ասպնջականին: Եւ արդ ասեր իմ արքայ, եթէ զտի շնորհս, առաջի քո է պարգևաց ընդ քոց, զոր ունիս, տուր ինձ:

Յոր ասա եկաց արքա և ասէ.

---

[1] *Բնագիրը ներկայացնում ենք ըստ Մաշտոցի անվ. Մատենադարանի, թիվ 1775 ձեռագրի:*

[2] *Մաւրիկ-Նախագահի Հունաց կայսր(582-601):*

[3] *Խոսրով-Պարսից Խոսրով II թագավոր (590-628):*

[4] *Հերակլ- Բյուզանդական կայսր(610-716)*

-Ոչ կարեմ տալ քեզ զոր խնդրեցեր:

Եւ յարուցեալ տիկինն յաղօթս, եկաց առաջի սրբոյ նշանին և երկիր եպագ արքայ և գնաց զճանապարհն իւր: Եւ ասէ արքա զմեծամեծս իւր:

-Այրի սիրտ իմ յաղագս բարետռիմ և հաւատարիմ կնոջն այնմիկ:Քանզի բազում ծախս հանեալ ի դրան իմում և դարձաւ գնաց՝ տրտում և ունայն:

Անդ էր Յոհան՝[1] այր փիլիսոփա և սուրբ և սիրեր զնա արքա: Եւ ասէ Յոհան ցարքայ.

-Արայ զոր ասեմս:Դի՛ր սուր ի պահարանի սրբոյ նշանի սեառն: Եւ ասա զկինն, զի աղօթս արասցէ: Եթե կամք լիցի սրբոյ նշանին՝ տացէ նմա մասն, ձեռամբ հոգւոյն սրբոյ:

Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի արքայի: Յղեաց և դարձոյց զկինն և եկալ եկաց առաջի նորա: Պատասխան ետ արքայ և ասէ.

--Ով կին դու, մեծ հոգս եղեր դու ինձ : Եւ արդ դնեմ սուր ի պահարանի սրբոյ նշանին Քրիստոսի : Եւ դու առեալ զեպիսկոպոս և զքահանայ քո և արասցուք աղօթս՝ հսկմամբ զիշերոյ: Եթե հաճոյեսցի տեառն Աստծոյ, տացէ քեզ մասն ըստ հաւատոց քոց:

Եւ երկիր էպագ տիկինն արքայի: Յայն ժամ հրամայեաց արքա բերել զնշան խաչին և բացեալ զարկղն ուր կայր փայտն սբ., իսկ և որիւն ոսկի և եղեալ դանակ ի նմա, կնքեաց մատանեաւ արքունի: Եւ եղև ի մտանել արևուն, եկալ առաջի սրբոյ նշանին եպիսկոպոսունքն և քահանայք բազումք, միաբան բազմութեամբ: Հաս և Յոհան Մայրագոմեցի և հսկեցին զզիշերն ամբողջ սաղմոսիւք և խնդրուածովք, մինչև զառաւտն: Իսկ թագաւորն բացեալ զոսկի պահարան խաչին և ահա տեսանէր մասունս երկու հատեալ ի սրբոյ վայրէն: Եւ հիացեալն զարմանալօք ընդ հաւատս կնոջ: Եւ ասէ թագաւորն.

--Ով դու կին, մեծ են հաւատք քո:

Եւ երանէին ի վրա եղելոցն: Եւ ասէին միաբերան.

--Երանի է վիճակի սրբոյն Գ. Լուսավորչի:

Եւ առեալ զնաց տիկինն, զոր շնորհեցաւ նմա յԱստուած զնշան խաչին: Եւ իբրև գնաց ընդ ճանապարհն, անցեալ ի դաշտին, որ Հացունեաց կոչի: Եւ մինչ դեռ երթային զճանապարհով և հանկարծակի նստաւ ջորին, յորում էր նշան խաչին, յոսկիապատ կառքն և ոչ եղև շարժել զնա: Նաև ոչ եպիսկոպոսքն և ոչ քահանայքն: Ապա առեալ տիկնոջն զսկեւիռնն ոսկի ի գիրկ իւր, յորում էր նշան խաչին և ոչ կարաց շարժել ի տեղոջէն: Եւ յոգոց հանէր, լայր:

Եւ հորդահոս յեղոր զարտասունս և ասէր.

--Տեր Յիսուս, ողորմեայ ինձ: Եւ արդ զի՞ զրկես զիս ի ցանկալի զանձուցս, զոր քեզէն աւանդեցեր ինձ: Զի կամիմ տանել զսա ի բնակութիւն հարց իմոց:

Եւ լուռ լինէին իբրև ժամ մի: Ապա սկսաւ տիկինն լալագին ասել.

-Ով տեր Աստուած իմ , դու նոյն տերն ես և այս սովորութիւն քո որպէս և ասացիր, թէ այլք վաստակեցան և այլք մտցեն ի վաստակս նոցա:

Եւ ահա եկն այր մի միայնակեաց, որ էր ի լերինն բնակեալ և ասէ զտիկինն:

--Ով, բարեպաշտ տիրուհի, հրամայեաց տեր Աստուած բնակիլ սբ. նշանիդ յայսմ տեղոջ:

Եւ ապա լուեալ, ետ փառս Աստուծոյ: Եւ շինեաց վայելուչ վկայարան ի տեղոջն: Եւ գնաց զաւանն Հաղմէր սքանչելիսն Աստուծոյ և զզօրութիւն սրբոյ նշանի խաչին ի փառս Աստծոյ:

ИСКАНДАРЯН Н. М. — Армянское средневековое сказание под названием "Ацунянц хач". В данной статье была сделана попытка ознакомить читателя с одним из жанров богатой армянской средневековой литературы вообще и сказания в частности. Это сказание было обнаружено нами в древних армянских рукописях. Оно повествует нам об историческом походе греческого царя Геракла в Персию (Պարսկաստան), с целью вернуть ранее похищенный крест в храм Христа. В этом благородном деле Гераклу предлагает свою помощь княжна Сюника Бюрег, которая за свое боголюбие была награждена частью креста.

В сказаниях армянского средневековья отражена действительность всех периодов жизни армянского народа, и почти всегда сказания носили религиозный характер. До 12-13-ых веков в сказщаниях чаще всего отражались героические поступки царей, князей и полководцев армянской истории. Кроме того, что это сказание было описано в рукописях (N 1775, 3461, 3519), оно освящего также в "Истории" Шапуга Багратуни, где оно переплетается с общей историей 7-го века.

[1] *Յոհան—Մայրագոմեցի, հմուտ աստուածաբան, Կոմիտաս կաթողիկոսի տեղապահ (621- 628):*

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Օգտվելով ազգային ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանից՝ Աղայանը հիմք դրեց հայ գրականության մի շատ կարեւոր եւ հետաքրքիր ժանրի՝ գեղարվեստական հեքիաթագրության: Նա բարձր գնահատելով հեքիաթի անգնահատելի դերը ժողովրդի հոգեւոր կյանքում՝ իրեն նվիրեց ժողովրդական հեքիաթներ մշակելու բարդ ու ստեղծագործական ջանքեր պահանջող գործին:

Գրողի համար հեքիաթներով զբաղվելու արգասավոր տարիները 1881-1911 թթ. են, երբ նա հավաքել, ուսումնասիրել, օգտվել է հայկական, Մերձավոր Արեւելքի, Անդրկովկասի եւ այլ ժողովուրդների բանավոր եւ գրավոր ստեղծագործություններից, մշակել է տասնյակ հեքիաթներ, փոխադրություններ ու թարգմանություններ է կատարել, որոնք ընթերցելիս չի զգացվում դրանց ոչ հայկական ծագումը:

Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, Աղայանի անձնական արխիվում պահպանված ձեռագրերի վրա կատարած նշումների, գրառումների, ինքնագրերի սեւագիր տարբերակների ու Աղայանի ստեղծած գոհարների բաղդատումը բանալի են ծառայում թափանցելու գրողի հեքիաթագրության ստեղծագործական աշխարհը եւ ըստ ամենայնի առնչվելու նրա գրական մշակման հիմնական սկզբունքներին:

Աղայանը հեքիաթները, զրույցներն ու ավանդությունները մշակելիս, երբեք չբավարարվեց սկզբնաղբյուրներում նկարագրվող դեպքերով ու գործողություններով, այլ հարստացրեց նորանոր երանգներով, թարմ դրվագներով, պատմություններով եւ հմտորեն ավելացրեց հեքիաթի շարադրանքին: Ժողովրդական բնագիրը անցկացնելով ստեղծագործական քուրայով, ցուցաբերեց գեղագիտական բարձր ճաշակ՝ միշտ հավատարիմ մնալով ժողովրդական բնագրի ոգուն ու բուն նյութին:

Բանահյուսական նյութերի գրական մշակման նմուշներ են Աղայանի «Ցախավելի գաղտնիքը» առակ - զրույցը, ուր արծածվում է ժողովրդական բնագրերի հիմքում ընկած միասնական ուժի գաղափարը՝ («Գեղ կանգնի, գերան կկոտրի») հաղորդելով փիլիսոփայական - բարոյախոսական ընդհանրացում: Առաջին անգամ տպագրվել է «ժողովրդական զրույց» վերնագրով («Վարժարան» ամսագրում), «Մանկական հեքիաթ», «Խելքն ու բախտը» եւ ուրիշ ստեղծագործություններ:

Ցավոք չեն պահպանվել Աղայանի հեքիաթների ձեռագիր բնագրերը: Աղայանի անձնական արխիվում պահվում են գրողի միայն չորս հեքիաթների ձեռագիր բնագրերը (մյուս հեքիաթների բնագրերը մեզ չեն հասել):

Այդ հեքիաթներից է «Խիզախը կամ Աներկյուղը» (ֆ - 8, թիվ 3,8 էջից): Հեքիաթը սեւագրություն է, թերթերը մաշված, պատառոտված, ջնջումներով: «Ա» տարբերակը հեղինակն անվանել է «Խիզախը», «Բ» տարբերակը՝ «Աներկյուղը»: «Ա» տարբերակն առաջին անգամ տպագրվել է 1911 թվականին, Աղայանի մահից հետո, «Խիզախը» վերնագրով, «Հասկեր» ամսագրի թիվ 11-ում, հետեւյալ մակագրությամբ. «Այս հեքիաթը վերջացած չէ: Հանված է այն թղթերից, որ հանգուցյալ Ղ. Աղայանը մահից առաջ հանձնել է Հովհ. Թումանյանին: Իսկ երկրորդ տարբերակի ինքնագիրը՝ «Աներկյուղը» առանձին չի տպագրվել: 1947 թվականին Ա եւ Բ տարբերակները միաժամանակ «Խիզախը կամ Աներկյուղը» ընդհանուր վերնագրի տակ տպագրվել են Աղայանի երկերի ժողովածուի առաջին հատորում:

«Ասիայի յույսը» հեքիաթի ինքնագիրը՝ (ֆ-8, թիվ 6ա, 6բ, 7) գրողի ուղումներով ու շտկումներով, կազմված է երկու հատվածից: Առաջին հատվածն ունի երկու տարբերակ (12 էջ), իսկ երկրորդ հատվածը առաջինի օրգանական շարունակությունն է (24 էջ): Գրողի ֆոնդում պահպանվել է մի հեքիաթի ձեռագիր եւս՝ «Լինում է չի լինում» սկզբնատողով, անվերնագիր (ֆ-8, թիվ 15, էջ 14): Այս հեքիաթն առաջին անգամ տպագրվել է «Խորհրդային գրականություն» ամսագրում, «Անտիպ հեքիաթ» խորագրով (1941, թիվ 3), որը հետագա հրատարակություններում վերանվանվել է «Վաճառականի խիղճը»:

Ծանոթանալով Աղայանի արխիվի հեքիաթներին վերաբերող տասնյակ գրառումներին ու նշումներին, համոզվում ենք, որ հեքիաթագիրը յուրաքանչյուր հեքիաթի մոտեցել է յուրովի՝ ելնելով դրա առանձնահատկություններից: Ունենալով գրական մշակման կոնկրետ նպատակ, երբեմն բնագրերում անտեսված, երկրորդ պլան մղված գաղափարը դարձնելով իր հեքիաթի գլխավոր առանցքը, ավելի է ընդգծել ու շեշտել, հարմարացրել իր գաղափարական, մանկավարժական սկզբունքներին, կատարել ծանր ու եռանդուն աշխատանք:

Աղայանը ժողովրդական հեքիաթների տարբերակները հավաքել, սրբագրել, համեմատել է իրար հետ եւ ընտրել լավագույնից լավագույնը, ոսկերչի նման հղկել է ու բյուրեղացրել, ստեղծել է կուռ ու անգուգական, աղայանական անկրկնելի հեքիաթները:

Ի տարբերություն ժողովրդական բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակման առաջին փուլի, երբ հեղինակը սահմանափակվում է ստեղծագործական ոչ մանրակրկիտ աշխատանքով, ժողովրդական բնագրի վրա աննշան լեզվաոճական շտկումներ, անհրաժեշտ կրճատումներ կատարելով (երեւակայական դրվագ կամ կերպար չի ներմուծում), երկրորդ փուլում, ընդհակառակը, հեղինակն իրեն իրավունք է վերապահում՝ հիմք ընդունելով ժողովրդական տարբերակի ընտրած սյուժեն, ստեղծագործական երեւակայությամբ զարգացնել այն,